Կրաշեն

Կրաշեն բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1340.30հա, բնակչությունը 267 մարդ: Կրաշեն գյուղը մարզկենտրոնից գտնվում է 18կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի հարավային փեշերին՝ ծովի մակարդակից 1880մ բարձրության վրա: Գյուղի տարածքում գտնվում է 1859 թ-ին կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: